17559

767

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԿԻ

ԱՆԺԱՄԱՆԱԿ ԹԱՏՐՈՆ

ԵՒ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Գերա. Թարգ. Մ. Մանդինեան.

(Արտատպած „ԼՈՒՄԱՑ“ գրական հանդիսից)

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Շարաձէի, նիկ., 21.
1896



2010

370 D-1
Ա-57

Հրատարակութիւն Պատրիկի

Բ.

ԱՆԺԱՄԱՆԱԿ ԹԱՏՐՈՆ
ԵՒ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Գերմ. թարգմ. Ս. Մանդինեան

(Արտատպած «Լումայ» գրական հանդիսից)։

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Շարաձէի Նիկոլ., տ. 21
1896

12001

8768

Дозволено Цензурою, Тифлисъ, 14 Іюня 1896 г.



3610-51

ԱՆԺԱՄԱՆԱԿ ԹԱՏՐՈՆ ԵՒ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ [1])

1

1833 թուականին Բոննի ուսանողների մէջ առանձին հաճութեամբ նկատւում էր մի 17 տարեկան պատանի, որ իւր գեղեցիկ և յաղթապինդ կերպարանքով գերազանցում էր իւր ընկերներից։ Նա բարձրահասակ էր և վայելչակազմ։ Եւ թէպէտ հիւսիսային գերմանացի էր, սակայն նորա երեսի մաքուր և վճիտ գոյնը գրեթէ իտալական տիպար էր տալիս նորան. երկար սև արտևանունքներով ստուերացած նորա մոյգ փայլուն աչքերը, նոյնպէս և այտերի մշտափթիթ վարդերը՝ կարծեցնել էին տալիս, թէ դա հարաւային Եւրոպայի

[1]) «Դաստիարակութեան արդիւնքներ» գրքից դարձեալ մի պատմութիւն (Տես «Լումայ» գրական հանդէսի Ա. գիրք, երես 183, ծանօթութիւն. կամ այս հրատարակութեանց առաջին գրկոյք „Դաստիարակութեան զօրութիւնը“, ծանուցումն թարգմանչի)։

Ծան. թարգմանչի

ծնունդ է։ Նորա գանգուր խիտ մազերը խարտեաշ էին կամ շէկ և մուգ. գեղեցկապէս կամարացած ճակատի շարունակութիւնն էր յորինում՝ իւր բարեկազմ, ուղիղ և փոքր ինչ ծայրարձակ քիթը, որ նորա խելօք և նուրբ դէմքին տալիս էր համարձակութեան դրոշմ։ Բերանն ու ծնոտը ծածկուած էր հազիւ նշմարող աղուամազով, մինչդեռ նորա ձայնը անոյշ խոր բամբ էր հնչում։

Ով որ ի մօտոյ ճանաչում էր Կարլ Ֆօն Հոհենհաուզէնին, նորա մէջ գտնում էր ի ընէ առատապարգև ոգի, զմայլում էր այն անդուլ եռանդից և ժրութիւնից, որ նա իրաւագիտութեան ուսման նուիրում էր, և յարգում կամ սիրում էր նորան նաև իւր սրտի պատուական յատկութիւնների համար։ Վասն զի նա կենսազուարթ և սրտաբաց մարդ էր, ընկերութեան մէջ զուարճախօս և ուրախ՝ առանց չափազանցութեան, բոլոր ծանօթների դէմ հաճոյական և սիրաբուղխ, իսկ իւր վարքի մէջ գրեթէ միշտ հաւասար և անփոփոխ։ Նորա մտքի աշխուժութիւնը՝ միշտ բաց և զգաստ էր ամենայն նորութեան համար, բայց և ուսումնական նիւթերի մասին սիրում էր զրուցել։ Միայն տան մէջ շատ անգամ տխուր և մտախոհ էր, բայց շուտ սթափուող և բացարձակ զուարճացող։ Ըստ ամենայնի բարոյական գոլով, ոչ մի երիտասարդական մոլութեան անձնատուր չէր լինի, ուստի և նորա վարքը ամեն բանի մէջ անարատ և առաքինի էր։

Ուսանողական կեանքը գրաւիչ էր նորա համար, բայց աւելի գաղափարական կողմից, նորա մէջ փնտռելով հին ասպետական կեանք, ուստի և ամենայն ծայրայեղութիւններից խորշում էր և համալսարանական ազատութեան ուրախութիւնների մէջ՝ սիրում էր վայելուչ չափաւորութիւն։ Նորա ոգուն հակառակ էր պարծենալ ուսանողական վայրենութիւններով, իսկ չը փնտռած մենամարտութեան կոչը ընդունում էր, և այն ժամանակ նա ցոյց էր տալիս արիութիւն, պահելով իւր անձը հանգիստ և վսեմ։

Նորա ընտանեկան հանգամանքները շատ յաջող էին։ Իւր և ծնողների մէջ յարաբերութիւնները խիստ մտերմական էին, և ինչպէս որ ներկայում գոհ կեանք վարելու համար նիւթական միջոցներ չէին պակասում իրան, այնպէս էլ նորա ապագան բոլորովին ապահոված էր։

Յայտնի է, որ ուսանողական տարիները, նոյն իսկ պակաս նպաստաւոր պարագաներում, շատերի համար կեանքի ամենաերջանիկ հա-

տուածն է. իսկ Կարլ Ֆոն Հոհենհաուզենի համար, որ այնքան առաւելութիւններով օժտուած էր թէ նիւթապէս և թէ հոգեպէս, ուսանողութիւնը աւելի ևս պէտք է նմանէր այն գեղեցիկ մայիսեան օրին, որի կապուտ երկինքը չի պղտորւում ոչ մի ամպից, որի մեղմիկ և ծաղկաբոյր շունչը չի սառչում ոչ մի հիւսիսային հողմից: Իւր ծանօթներն էլ, որոնք եկել էին գեղեցիկ Հռենոսի համալսարանում գիտութիւն ստանալու, նորան համարում էին հենց այդպէս ամենաբախտաւոր պատանի:

Բայց որքան անակնկալ և սոսկալի պիտի լինէր այն գոյժը, որ 1834-ի ապրիլի 5 ին նոցա հասաւ, թէ այնպէս առերևոյթ բախտաւոր համարուած պատանին՝ կամաւ կարճել է իւր կեանքը: Նախընթաց գիշերը, իւր սրտին ուղղած ատրճանակի մի հարուածով, նա կտրեց իւր կեանքի թելերը իւր ձեռքով, այնպէս որ զենքի բարձրաձայն պայթիւնից զարթեցած տան բնակիչները, զարհուրելով շտապեցին տեղը, բայց գտան միայն նորա անշնչացած դիակը, հանգիստ երկնցած անկողնու վերայ, իսկ նորա շուրջը մի կնքած ծրար, մէջը նորա օրագրութիւններն ու նամակներ, մի բաց յունարէն նոր կտակարան, երկու իրար վերայ

խաչաձև ընկած դանակներ և դատարկուած ատրճանակ:

Նախընթաց ցերեկուայ և երեկոյեան դէպքերի մասին այսքանը իմացուեցաւ: Զատկական արձակուրդների առաջին օրերին իւր ծնողները նորան կարօտակէզ սպասում էին տեսնել, և խիստ անհանգստացան, երբ որ նորա ընկերները փոստի կառքով արդէն հասան իրանց տեղը, իսկ նա չկար: Նոքա ստացան նորանից միայն մի կարճ նամակ, մարտի 30 թուով, որով նա իւր յապաղումը արդարացնում էր այնպէս, թէ ընկերներին խոստացել է ոտքով գալ հայրենիք և թէ անշուշտ 5 կամ 6 օրից յետոյ կը հասնի նոցա հետ ի միասին: Սակայն նշանակած ժամանակն էլ անցաւ, իսկ նա չերևեցաւ: Ծնողների համբերութիւնը աւելի ևս հատաւ, երբ որ տեղեկութիւն առան, թէ ոտքով եկող ուսանողները արդէն անցել են, որոնց մէջ չի եղել իրանց որդին: Նոքա երկիւղ էին կրում, չը լինի թէ նա հիւանդացել է կամ վնասուել է մենամարտութիւնից, որի մասին անորոշ լուրեր էին պտտում, կամ վերջապէս թերևս պարտքեր ունի, որ դժուարանում է Բոննից դուրս գալ: Այս պատճառով մայրը մի գորովալից նամակ գրեց, որ ոչ թէ յանդիմանական էր, այլ ար-

տայայտում էր տրտունջ նորա անբացատրելի բացակայութեան համար, խոստումներ վճարել պարտքերը, եթէ իւր վերայ ծանրացել են, և երկրորդ անգամ ճանապարհի ծախք առաքել։ Հայրը ուրիշ գուշակութիւններ անելով՝ աւելացրեց այս խօսքերը. Quidquid agis prudenter agas et respice finem, այսինքն՝ ինչ որ մտադրում ես, խոհեմութեամբ գործիր և կշռիր վախճանը։

Այս նամակը ուղարկուեցաւ Բոնն, որդու տանտիրոջ անունով, այն հաւանականութեամբ, թէ գուցէ որդին ճանապարհ ընկած լինի, որ և հասաւ նշանակած տեղը ապրիլի 4-ին։ Կարլ Ֆօն Հոհէնհաուզէնը հէնց այդ ժամանակ գտնւում էր սրախաղութեան կրկէսում։ Տանտէրը խկոյն կանչել տուեց այն տեղից, յանձնեց նամակը և աւելացրեց, թէ պատրաստ է իրան տալ այնքան ճանապարհածախք, որքան որ ուզենայ։ Բայց նա մերժեց առաջարկութիւնը, գնաց իւր սենեակը և կարդաց նամակը զգացուելով և արտասուքով։ Աղախինը այդ տեղ էր և նկատեց այս փղձուկը։ Դա առաջ էլ վկայ է եղել, որ նորա ընկերները համոզելիս են եղել նորան իրանց հետ հայրենիք գնալու. վերջին երեկոներին նկատել է, որ նա գնդակներ է թափել, մի քանի դանակներ դաշունաձև սրել է, և երբ որ իրանից հարցրել է, թէ ինչի համարեն դոքա, պատասխան է ստացել, թէ փայտից բան է ուզում տաշել։ Տանտէրը այս բոլորը չարագուշակ համարելով, սրտադող ընկաւ պատանու ոտքերը և աղաչեց այլ ևս չը յետաձգել ճանապարհը, խկոյն տունը նամակ գրել, թէ գալիս է, և իւր ծնողների անհանգստութեան վերջ դնել։ Կարճ և զայրացած պատասխան ստացաւ Կարլից, որ վեր կենայ, և թէ չի սիրում մէկին չոքած տեսնել, թէ հայրենիք կը դառնայ, միայն անմիջապէս չի կարող տեղից շարժուել։

Բայց և այնպէս տեղն ու տեղը մի քանի տող գրեց ծնողներին։ Նա յայտնում էր, թէ խիստ վշտացած և ինքն իրան կշտամբելով կարդաց նոցա նամակը, բայց չէր երևակայում, որ իւր պատճառով նոքա մտատանջութեան մէջ պիտի լինէին։ Անզգուշութեամբ ստացած մի փոքր տկարութիւնը արգելեց ժամանակին գալուն. դրամի կարօտութիւն չունի. նամակից յետոյ ինքն էլ անմիջապէս ճանապարհ կընկնի։ Մի քանի տող տանտէրը աւելացրեց, թէ նոցա որդին հիւանդ էր (մենամարտութեան մէջ ուսին մի վերք ստանալով), բայց հարկաւոր խնամքներով արդէն իսպառ

ապաքինացած է, և թէ ճանապարհի բոլոր պէտք եղածները ճշտիւ կը հոգայ։ Նամակը իսկոյն ուղարկուեցաւ փոստը։

Կարլ Ֆօն Հոհէնհաուզէնը երեկոյեան գնաց ուսանողական ընկերութեան մէջ, ուր որ նա անդամ էր, իսկ աղախնին պատուիրել էր մինչև իւր դարձը տաք ջուր պատրաստել ոտքերի համար, որ մի քանի երեկոյ շարունակ գործ էր ածել։ Իւր վեստֆալեան հայրենակիցների շրջանում ուրախ էր և զուարճանում, բայց գլխացաւի պատճառով ժամի 10-ին տուն դարձաւ։ Այս տեղ տաք ջուր ընդունեց, հագաւ մաքուր ճերմակեղէն, իրանից յետոյ եկող ընկերին սովորական սիրով ողջունեց, որ նոյն տան բնակիչ էր, և խնդրեց նորանից, ինչպէս ուրիշ անդամներ էլ խնդրել է, որ մի բան ածէ ջութակի վերայ։ Այս կատարուեցաւ, և դեռ էլի երկար խօսեցին ընկերները իրար հետ։

Երբ որ նա մէնակ մնաց, դրսումը մի քանի ժամ լսւում էին, որ նա լայն քայլերով սենեակում յետ ու առաջ մանէ գալիս, մինչև որ կատարեալ լռութիւն տիրեց։ Առաւօտեան ժամի 3 էր, երբ որ մահացու գնտակը արձակուեցաւ։

Մի քանի բարեկամների և մօր հաղորդած տեղեկութիւններից, թշուառի վերջին ամիսների կենաց մասին, յայտնի է նաև հետևեալը։

1833-ի գարնան մի գեղեցիկ օր Կարլ Ֆօն Հոհէնհաուզէնը բաժանուեց հայրենիքից և ծնողներից, որոնք բնաւ չէին գուշակի, թէ այս տեսութիւնը վերջինն է։ Երբ որ հրաժեշտի ժամանակ հայրը որդուն սեղմեց իւր կրծքին, կշտին կանգնած մայրը վերջնի դէմքի վերայ տեսաւ մի սև ամպ. և այդ ոչ թէ վշտակրութիւն էր կամ թախիծ, այլ սառն սոսկումն, չարագուշակ լքումն, անընկճելի յուսահատութիւն։ Ամաբեկուած մայրը պատրաստւում էր գոչել. «Կարլ, ի՞նչէ մտքումդ», բայց որովհետև ամպը շուտով ցրուեց, նա լուռ մնաց։

Ծնողները ամառը Բոննից ուրախ և իմաստալից նամակներ էին ստանում որդուց, և միայն նուազ դէպքերում թեթև գանգատներ էին կարդում նորա առողջութեան մասին։ Աշունքի արձակուրդներին մի ուսանողի հետ նա ոտքով ճանապարհորդեց Ֆրանսիայի մի մասը, Զուիցերիա, Բաւարիա և Շուաբիա։ Ամբողջ ճանապարհին նորա ուղեկիցը նորա վերայ չը նշմարեց ձախորդ տրամադրութեան ոչ մի նշան։ Նա միշտ զուարթ էր,

ոչ մի տրտունջ չէր յայտնում և շատ լաւ դիմացաւ. ճանապարհի դժուարութիւններին։ Այդ միջոցներին յաճախ նամակներ գրեց ծնողներին, միշտ մանրամասն, ուրախ և հանճարով։ Միայն Նիւրընբերգից գրած վերջին նամակում նկատողութիւն էր կցել, թէ ճանապարհից աւելի ապաքինութիւն էր սպասում։

Նիւրնբերգում ազգականների մօտ մնացել էր ութ օր, և այն տեղ ոչ ոք ոչմի բան չը նկատեց, որով գուշակուէր այն քստմնելի վճիռը, որ կէս տարի յետոյ նա ի կատար ածեց։ Նա կարծես գոհ էր իւր ազգականների շրջանում, միայն մի քանի խնդիրների մասին հանդիսաւոր լրջութեամբ էր խօսում։ Սկզբում գեղեցիկ պատրաստուած կերակուրների վերայ ուշադրութիւն չէր դարձնում, բայց մի քանի օրից յետոյ սկսեց ընտրութիւնը նկատել, գովել խոհարարի արհեստը, և այնպէս համով ուտել, ինչպէս որ վայել է աճող և առողջ երիտասարդին։ Մարմնական ցաւի ոչ մի նշոյլ չէր երևում։ Միշտ մասնակցում էր բոլոր ուրախութիւններին, բայց կարծես ոչ կատարեալ ներքին ազատութեամբ։ Զբուցատրութեանց ժամանակ այնպէս էր խօսում, որ ազգականների հաւանութիւն գտաւ, միայն կրօնական խնդիրների մասին

նորա գաղափարները չը գոհացրեցին նոցա, որովհետև յիշեցնում էին Բայրընին։ Վերջին գիշեր նա մինչև գիշերուայ ժամի 1-ը խանդերգեր յօրինեց դաշնամուրի վերայ, շատ լաց եղաւ և հեկեկաց, բայց հետևեալ օրը, հրաժեշտի ժամանակ, կրկին զուարթ և սիրահամբոյր էր։

Իւր մօտիկ համալսարանական ընկերները ձմեռուայ կիսամեակին նկատում էին, որ նա շուտ շուտ խոհերի մէջ է ընկղմում և զգալի կերպով լուռ է մնում. բայց որովհետև հարցմունքներից փախուստ էր տալիս, իսկ ընկերութեան մէջ այնպէս ուրախ էր լինում, որ կարծես թէ ոչինչ ցաւ չունէր, ուստի այդ բոլորը համարեցին մի անցողական և աննշանակ տհաճութիւն։ Ոչ ոք ընկերներից մտքում չէր անցնի, թէ դա կարող էր ունենալ որևէ հոգեկան կամ մարմնական ցաւ. ընդհակառակ, նորան միշտ համարում էին առողջ կենսասէր պատանի։ Իսկ տարուայ վերջը ծնողներին սկսեց ուշ ուշ նամակ գրել, այն ևս չոր և ցամաք։ Այս փոփոխութիւնը նոքա այնպէս բացատրեցին, թէ գուցէ նա սկսել է չափազանցութեամբ վայելել ուսանողական կեանքը, ուստի և կանխաւ պատրաստուեցան նորա մոլութիւնները սրտով ներել։

Իւր համալսարանական ընկերներից մէկին, որ պատրաստւում էր Բոննից հեռանալ և որին եղբօր պէս էր սիրում, ասաց, թէ ինքը խիստ անբախտ է զգում իւր անձը և թէ կուզենար Հռենոսի ալիքներում թաղուել կամ մի գնդակ արձակել իւր սրտի մէջ։ Բայց ընկերը այդ խօսքերին կարևորութիւն չտուեց, միայն նախատեց, որ այդպիսի ցանկութիւններ են ծնում նորա գլխի մէջ, քանի որ բոլոր մարդկանցից նա աւելի քիչ պատճառունի այդպիսի խենդութեան համար։ «Դու չես ճանաչում ինձ», այս էր նորա պատասխանը ընկերի բոլոր հարցուփորձին և աղաչանքներին, որ յայտնէ, թէ՝ինչից է ճնշւում։ Միայն մի անգամ աւելացրեց. «Ինչո՞ւ ասեմ քեզ, ինձ այլ ևս ոչ ոք չի կարող օգնել»։ Ընկերը չը հասկացաւ խօսքերի զօրութիւնը, և կարծեց թէ նորա այլայլութիւնը ժամանակաւոր տխրութիւն է։

2

Կարլ ֆօն Հոհէնհաուզէնը ծնուել էր 1816-ի յունուարի 17-ին Միւնստէրում և մի անուանի բարոնի որդի էր, որ ազնուական գոլով՝ համապատասխան պատուաւոր պաշտօն-

ներ է վարել, նախ Վեստֆալի թագաւորութեան մէջ, ապա երբ որ վերջինս լուծուեցաւ՝ նաև Պրուսիայի թագաւորութեան մէջ։ Նորա մայրը մի զօրապետի դուստր լինելով՝ կանուխ հռչակուեցաւ իբրև յայտնի մատենագրուհի զանազան ոտանաւորներով, Բայրընի գրուածոց թարգմանութիւններով, բանասիրական հանդէսների մէջ մասնակցելով։

Ծնողները իւրեանց զաւակին մեծացրին ամենայն անձնուիրութեամբ, որը որ հենց մանկութիւնից սկսած աչքի էր ընկնում ուժեղ կազմուածքով, վարդագոյն այտերով և մոյգ աչքերով։

Նորա առաջին տարիքներից շատ բան յայտնի չէ։ Իւր հասակի համեմատ շատ կայտառ էր, բայց և խիստ խելօք էր վարքի մէջ։ Հայրը կարծես մրցում էր մօր հետ ծնողական քնքշութեամբ և աչքից չէր հեռացնում որդուն. գրեթէ երբէք չէր գնայ զբօսնելու, եթէ իւր սիրելի որդին հետը չլինէր։

Արդէն 4-դ տարում մանուկը ցոյց տուեց մի քանի ընորոշ յատկութիւններ, որոնք յետոյ պատանեկութեան հասակում աւելի բարգաւաճութեամբ երևեցան։ Զը նայելով իւր խընդասէր բարքին, շատ բան նորա վերայ թողնում էր անջնջելի տպաւորութիւն և յաճախ

արտայայտում էր այնպիսի վճռականութիւն և խոհեմութիւն, որ իւր հասակի համար խիստ զարմանալի էր։

1820-ին ծնողները իրանց որդու հետ գընացին Բերլին, ուր բաւական երկար ժամանակ մնացին։ Մայրը իսկոյն կապեր հաստատեց տեղական գեղասէր և կիրթ շրջանների հետ, այնպէս որ Բերլինի գեղեցկասէր հանճարները շաբաթը մի անգամ նորա տան մէջ էին ժողովում։ Նոցա թւումն էր Ռաքել ֆօն Բարնհագէն, որ ոչ միայն զարգացած ոգի ունէր, այլ և գեղեցիկ սիրտ, և թէպէտ հրէական ծագումով՝ բայց իւր հոգեկան առաւելութեանց պատճառով ընդունուած էր կրթուած ազնուականութեան մէջ. ինքնատիպ և հանճարամիտ Բէտինա ֆօն Արնիմ, որ յայտնի է իւր նամակագրութեամբ Գեօթէի հետ. Ամալի ֆօն Հելուիգ, որ արդէն օրիորդ ժամանակ վայելում էր Շիլլերի և Գեօթէի բարեկամութիւնը, որի պարծանքն էր իւր մաքուր բարոյական անունը և որ յայտնի էր որպէս ընտիր նկարչուհի։ Հայնրիխ Հայնէն ևս այս շրջանի մէջ էր, որ այդ ժամանակ ուսանող էր Բերլինում և բանաստեղծական երկնքում նոր երևում էր որպէս աւետաբեր աստղ։ Նորա ոտանաւորները, ինչպէս և «Ռատկլիֆ» և «Ալմանզօր»

եղերերգութիւնները, արդէն դարձրել էր շատերի ուշադրութիւնը իւր վերայ։ Վերջին եղերերգութիւնը լիքն է սարսափ և սոսկում բերող տեսարաններով, ուր ինքնասպանութիւնը առաջին դեր է խաղում։

Ահա այսպիսի շրջանումն էր ապրում փոքրիկ Կարլը մի քանի տարի և միևնոյն ժամանակ սկսեց սովորել կարդալ ու գրել։ Այն հանճարեղ կանայք և արք, որոնց ընկերութեան մէջ որ նա յաճախակի գտնւում էր, շատ էին զբաղւում նորա անձով, գովում էին զուարճամիտ մանուկի գեղեցկութիւնը, նորա տղայութիւնները խիստ խելացի էին համարում, նորա մէջ գտնում էին մեծ հանճարեղութիւն, և յայտնի կամ լռելեայն կերպով մարգարէանում էին, թէ անշուշտ մեծահռչակ ապագայ պիտի ունենայ։ Եթէ գրականական երեկոներում բանաստեղծութեան Մուսայի նորութիւններ կարդային, նա միշտ ներկայ էր լինում և մտադրութեամբ լսում։ Մի անգամ հայրը ի լուր ամենեցուն կարդալով Հայնէի «Ռատկլիֆ»-ը, սխալմամբ և շտապելով մի տող փախցրեց։ Իսկոյն վեցամեայ մանուկը վառուած աշխուժով վազեց հօր կողմը և գոչեց. «Չէ, չէ, հայր, դու մի տող թողեցիր, այդ խօսքը յետոյ պիտի գայ։» Զարմացած հասա-

3610-51
ՀՍՍՌ ԱՄՆ ՍՍՌ

բակութիւնը այս կերպով իմացաւ, որ նա հա-
զիւ ընթերցանութիւնը սկսած՝ արդէն Հայնէի
եղերերգութիւնը ոչ միայն կարդացել է, այլ
և լիովին հիւսել է իւր երևակայութեան մէջ։

Հայրը երբեմնակի նորան թատրոն էր
տանում, որով նորա երևակայութիւնը այն-
պէս բորբոքեցաւ, որ նա սկսեց տեսած թատե-
րախաղերը ներկայացնել իւր քրոջ և թղթէ
խամաճիկների օգնութեամբ, հարկաւոր հա-
գուստները և հանդերձանքները ինքնուին
պատրաստելով. նորան մեծ ուրախութիւն
պատճառեց նոր տարուայ ընծան, որ էր մի
փոքր թատրոն։

Ծնողները Բերլինից տուն դառնալով,
որդուն զետեղեցին մի գիմնազիոն։ Նա իւր
ջանասիրութեամբ յաղթեց հին լեզուների
դժուարութիւնները, միւս ուսմունքներում ևս
մեծ յառաջադիմութիւն ցոյց տուեց։ Շատ սի-
րեց աշխարհագրութիւնը, մանաւանդ քարտեզ
նկարելը։ Ինը տարեկան հասակում այս դրժ-
ուարակիր աշխատութիւնը մանուկին կէս օ-
րերով պահում էր սեղանի մօտ, մէջքը ծռած
և ստամոքսը սեղմած։ Ծնողները չէին ար-
գելում, որովհետև նկարելու տաղանդ էին
տեսնում որդու մէջ։

Նորա ուսումնական և կրօնական կրթու-

թիւնը թողնուած էր միայն ուսումնարանին,
որ լաւ համբաւ ունէր. իսկ մարմնական կրթ-
ութիւնը առաջնորդում էր հայրը։ Ձմեռը
նա սառնասահով խայտում էր սառուցի վերայ,
ամառը լողանում էր գետի մէջ և սովորում
էր ձի հեծնել։

Թւում էր թէ աշակերտական աշխատու-
թիւնների և մանկական խաղերի պատճառով
նորա նախկին բանաստեղծական ուղղութիւնը
պակասել է. բայց այդ միայն երևոյթ էր։ Նո-
րա քոյրերը գտել էին նորա շարադրած եղե-
երերգութիւնների և ոտանաւորների հատ ու
կտորներ. և որովհետև սկսեցին ծիծաղել նո-
րա սխալների վերայ, նա այնպէս վիրաւո-
րուեցաւ, որ այնուհետև սկսեց ծածկել իւր
գրական փորձերը։ Մօր խրատը, թէ հարկ չը
կայ այդպէս կանուխ նուիրուիլ բանաստեղծա-
կան զբաղմունքներին, այլ աւելի օգտաւէտ է
ուսանել, կարծես, անհետևանք չը մնաց։ Նա
ոչ միայն սկսեց յօժարութեամբ դասերը սովո-
րել, այլ ցանկացաւ դասեր տալ։ Խաղընկեր-
ներից իւր համար աշակերտներ ընտրեց, և
եթէ նոքա հանգիստ չը նստէին, աշխատում
էր նոցա գրաւել իւր գրպանի դրամով կամ
փոքրիկ ընծաներով։ Այսպիսի նստակեաց պա-
բապմունքը աւելի հաճելի էր իրան, քան

մանկական խաղը, գուցէ առաւելապէս այն պատճառով, որ ոչ ոքից յետ չմնալու տենչը՝ այնքան չէր իրագործում խաղերի մէջ, որքան եթէ ինքը պստիկների ուսուցիչ հանդիսանար։

Տասներկու տարեկան հասակում մտաւ երրորդ դասարան, [1]) և այդ ժամանակ նորա մէջ ցանկութիւն շարժուեցաւ արտաքին կեանքով ապրել և պատանեկան քաջասրտութիւն ունենալ. այս տեղ էլ նա ուզում էր, որ ոչ ոքից տկար չհամարուի։ Բայց միևնոյն ժամանակ միշտ զգուշանում էր այնպիսի արարքների մէջ մասնակցելուց, որ մերժելի կարող էին լինել բարոյապէս, և փոյթ ունէր, որ ուսուցիչների կամ հասակաւոր մարդկանց յարգանքը չկորցնէ։ Իսկ միւս գիմնազիականների պէս սիրում էր պճնուել հագուստով և արտաքին դիրքով, և աշխատում էր ծանօթանալ սիրուն օրիորդների հետ և չխնայել նոցա համար անմեղ հաճոյական շնորհքներ։ Այդ նշաններում ծնողները տեսնում էին նոր արթնացած ինքնազգացութեան միամիտ արտայայտութիւն, և աւելի ուրախ էին, որ որդին արագ աճում և հասունանում է, որ նա այն

[1]) Գերմանիայի առաջին դասարան է կոչվում վերջինը։

աստիճան զուարթ, ուժեղ և վայելուչ երևոյթ է դառնում, որ նոյն իսկ օտարների համակրութիւնն է ստանում։

Սակայն այսպէս զուարճալի կեանքը շուտ վերջացաւ։ Տարեկան քննութեանց ժամանակ գիմնազիոնի երրորդ դասարանը տկար հանդիսացաւ, այնպէս որ ի թիւս այլոց նաև Կարլի հայրը հրաւէր ստացաւ, որ որդու եռանդը աւելացնելու համար իւր օժանդակութիւնը չխնայէ։ Հայրը նեղացաւ որդու վերայ և մի աշակերտի հետ ընկերակցութիւն շարունակելը արգելեց, որ պատճառ էր դառնում որդու ցրուածութեան։ Մանուկի սրտի մէջ արդէն բռնկած պատուասիրութեան կայծը՝ այս դէպքից յետոյ բոցավառ կրակ դարձաւ։ Նա բոլորովին կերպարանափոխուեցաւ, ուշք ու միտքը միայն ուսման ընծայեց, փոխադրուեցաւ երկրորդ դասարան և այնուհետև ուսումը շարունակեց կրկնապատիկ ջանքով։ Մինչև կէս գիշեր սեղանի մօտ էր նստում, առաւօտեան զարթնում էր ժամի 5-ին, որովհետև դասերից առաջ մասնաւորապէս ուսանում էր անգլիերէն, զբօսանքները դադարեցրեց, իսկ եթէ հօր կամ մօր հետ գնում էր շրջելու, այն ժամանակ էլ աւելի ուսմանց վերաբերեալ խնդիրներ էր յարուցանում։ Այնուհետև նա

քիչ էր կարդում վիպասանութիւններ, որովհետև հայրը արգելում էր բորբոքիչ ընթերցանութիւն։

Տասնուհինգերորդ տարիքի սկզբում Կարլ Ֆօն Հոհենհաուզենը, որպէս աշակերտ աւագ երկրորդ դասարանի, արդէն բարձր և նուրբ հասակ ունէր, զուարթ և ուժեղ պատանի էր, ծնողաց պարծանք և մխիթարութիւն էր, և սիրելի ու յարգելի էր ուսուցիչների և աշակերտների առաջ։ Նախկին տղայական զուարճասիրութիւնը այժմ փոխուել էր ազնիւ արիական լրջութեան, որով թեթև աշխարհասիրութեան և ցրուածութեան հետքն անգամ կորել էր։ Ընդհակառակ այժմ նա սկսեց հետաքրքրուիլ ժամանակակից քաղաքական դէպքերով։ Յուլիսեան յեղափոխութիւնը և լեհերի պատերազմը ազգութեան համար՝ խիստ տպաւորութիւն գործեցին նորա վերայ։ Սակայն այս դէպքերը նորան գրաւում էին ոչ այնքան քաղաքական ձգտումների տեսակէտից, որքան դիւցազնական սխրագործութիւնների կողմից։ Բնաւ կարևորութիւն չտալով քաղաքական նորանոր դրութիւններ ստեղծելուն, նորա սիրտը բորբոքւում էր մարդկութեան ընդհանուր երջանկութեան համար, ուստի և ծայ-

բայեղ ռամկավարական գաղափարներին չէր համակրում։

Որքան որ նա աշխատութիւնը աւելացնում և հանգստութիւնը պակասեցնում էր, այնքան ծնողները չէին հաւանում այդպիսի չափազանցութիւններին, բայց նա պնդում էր, թէ դոքա հարկաւոր են, որպէս զի զատկին փոխադրուի տենչացած առաջին դասարանը։

Ահա այդ ժամանակից քիչ քիչ զգաց մարմնական թուլութիւն։ Նորան տանջում էր խոստուկը (փորի կտրատուիլը) և (որովայնի) խիստ պնդութիւնը։ Բժիշկերն աննշան համարեցին հիւանդութիւնը և առ երեւոյթ ապաքինեցին։ Բայց հիւանդութիւնը ժամանակ առ ժամանակ շարունակուեց կրկնուիլ, այնպէս որ ոչ միայն ծնողները, այլ ինքը Կարլն էլ սկսեց անհանգստանալ հետևանքների մասին։ Նորա մտածողութեան մէջ առաջին անգամ բոյն դրեց սեամաղձ երևակայութիւնը և նա սկսեց յամառութեամբ ինքն իրան համոզել, թէ ժամանակով փոքր ինչ առաջ նկատած ստինքների ուռուցքը և որովայնի անկանոնութիւնը՝ անշուշտ խոլխեցգետի և ցայլքի աղէթափութեան նշաններ են։ Չնայելով բժիշկների հանգստացուցիչ կարծիքներին, պատանու սրտի մէջ երկիւղներ բուսան, որ այլ ևս

չը ջնջուեցան, այլ ընդհակառակ անբուժելի կերպով ծածուկ ծաւալեցին։

Այլ այս հիւանդական երևոյթները նորա ծաղկափթիթ դէմքին ոչինչ վնաս չտուեցին, այնպէս որ ծնողները հաւատացին, թէ ամենայն ինչ անվնաս կվերջանայ։ Նա սկսեց փոխանակ սեղանի՝ երկայն գրակալ գործ ածել, որպէս զի երկար նստած չմնայ պարապելիս, թողեց երաժշտութեան և անգլիերէնի դասերը, կանոնաւոր կարգ և զգուշութիւն մտցրեց կերակուրների մէջ, շուտ շուտ զբօսնում էր և զանազան ջրեր էր խմում։

1831-ին այսպիսի միջոցների գործածութիւնը կարծես օգնեցին, բայց շուտով հիւանդութիւնը աւելի ուժով սաստկացաւ, մինչև որ ծածուկ տխրութիւնը ծայրագոյն յուսահատութեան փոխուեցաւ։ Նորա վարմունքի մէջ սկսեց նշմարուիլ մի սառն և դաժան յամառութիւն։ Հետևեալ տարին էլ շատ անգամ խաւար էր լինում դէմքով և ինքն իւր մէջ ընկղմած, բայց ցաւի մասին ուշ ուշ էր գանգատւում։ Մի անգամ պատահմամբ յայտնեց, թէ իւր մտածողութիւնը սկսում է շըփոթուել և յիշողութիւնը թուլանալ, և թէ կեանքը այլ ևս չի ուրախացնում իրան։ Նորա առողջ դէմքը խաբում էր բժիշկներին,

որոնք չէին տեսնում հիւանդութեան ծանրութիւնը, իսկ դառնաշունչ յամառութիւնը աւելի հասակին էին վերագրում ծնողները, և ոչ թէ հիւանդութեան, այն ևս առ ժամանակեայ տրամադրութեան, քանի որ նորա միւս վարմունքների արտայայտութիւնները բնաւ չարագուշակ չէին։ Միշտ իւր ընկերների հետ էր լինում, նոցա հետ ի միասին սրախաղութեան և հրացանձգութեան վարժութիւններ էր անում։ Երեկոները երգում և պարում էր քոյրերի հետ, հանաքներ էր անում հօր հետ, և առ հասարակ նորա վարքը չէր զանազանւում այն ամրակազմ և կենսազրուարթ պատանիների վարքից, որոնք նորա հետ ի միասին պատրաստւում էին գիմնազիոնից անցնել համալսարան։

1833-ի զատկին Կարլ Ֆօն Հոհէնհաուզէնը վերջնական քննութեան ժամանակ ստացաւ հասունութեան վկայական № 1, որ նորա պատուասիրութեան գլխաւոր նպատակն էր։ Բայց այնքան երկար ժամանակ երազած և այժմ կատարուած իրողութիւնը կարծես թէ նորան չբախտաւորացրեց։ Ամենայն համեստութեամբ բայց սառն սրտով և ճակատը ամպամած, մեկնեց նոր ընդունած վկայականը իւր գերերջանիկ հօրը այս խօսքերով. «Ա-

հա հայրիկ, քեզ բերում եմ վկայական № 1. ես այդ ստացայ, բայց արժանի չէի»։

Հանքային ջրերի գործածութիւնը դարձեալ թեթևութիւն տուեց Նորան։ Իսկ ծնողները աւելի յոյս էին դնում Բոնն գնալու ճանապարհորդութեան, Հռենոսի գեղեցկութիւնների և ուսանողական ազատ կեանքի վերայ։ Ափսոս, որ յոյսերը ի դերև ելան։

3

Թէ որքան կարևոր հանգամանք է դաստիարակութեան մէջ, որ մտադրութիւն դարձնուի պատանու ոչ միայն արտաքին գործքերի և հրաժարումների վերայ, այլ և կարդալ նորա սրտի մէջ, իմանալ նորա մտքերի և զգացումների զարգացման ընթացքը, կարօտ չէ ապացուցի։ Անփոյթ դաստիարակիչները մինչև անգամ մտքով չեն անցնում, որ մի փոքր փոքրն սանիկի ներքին աշխարհքը հետազօտելու. նոքա նորա արարմունքերի շարժառիթները թեթև սրտով աճապարանօք դատում են այն կանխակալ կարծիքներով և հայեացքներով, որ նոքա կազմել են իրանց անձնական մտածելու և զգալու կերպերից։ Սակայն այս գործը շատ հեշտ չէ. նոյն իսկ

ամենաբարեխիղճ դաստիարակութիւնը շատ անգամ կդժուարանայ ուղիղ գաղափար ստանալ մանուկի ներքին կեանքից, որովհետև արտաքին նշաններից ներքին շարժումների մասին եզրակացութիւնը, երևոյթներից՝ պատճառների գիտութիւնը—մեծ մասով սխալ են դուրս գալի։

Կարլ Ֆօն Հոհենհաուզէնի ծնողները չը գիտէին նորա ներքին կենաց պատմութիւնը. բայց հարկաւ դժուար է մեղադրել նոցա այդ պատճառով։ Որովհետև նա ինքը խիստ ծածուկ էր պահում իւր ներքին աշխարհը ուրիշներից, և միմիայն նորա թշուառ վախճանից յետոյ մնացած օրագրութիւնները, ոտանաւորները և նամակները մի լոյս են սփռում այդ մասին։ Նորա թողած թղթերից ահա կը քաղենք նշանաւոր տեղեկութիւնները։

Իւր օրագրութիւնը սկսել է 12 տարեկան հասակում։ Այդ ժամանակից երկու բնորոշ ծանօթութիւն կայ։ Մէկի մէջ նա խօսում է մի «ծեր պատուական պարոնի» մասին, որին որ իւր ազգականների մօտ շատ անգամ տեսել է, և որից որ ինքը մի գովասանական ոտանաւորի է արժանացել, «սակայն բանաստեղծութիւնը լաւագոյններից չէր, այլ մի շարադրութիւն առանց չափի և իմաստի»։

Երկրորդը թատրոնին է վերաբերում։ 1828-ին թափառաշրջիկ դերասաններ էին եկել իւրեանց քաղաքում ներկայացումներ տալու, որոնց մասին այսպէս է գրում. «Այժմ շուտ շուտ թատրոն եմ գնում։ Երէկ տեսայ Իցկօ թատերախաղը։ Մի անգլիացի մեծ հմտութեամբ ձևացրեց նորան։ Բուրգունդիայի կոմսը լաւ չներկայացուեցաւ, թատրոնն էլ դատարկ էր։ Շէքսպիրի *Սէրն ամենայն ինչ կարող է* ինձ շատ գոհացրեց. նոյնպէս և Պրէցիոզան։ Աւազակների հարսը շատ չհաւանեցի»։

1830 թուականին դեռ ևս սրտի զեղումները օրագրութեան մէջ նոյնպէս մեծ ծաւալ չունին, բայց աւելի խոր բացւում է նորա ներքին կեանքը, որը բոլորովին ուրիշ գոյներով է ներկւում։ Հէնց առաջին տողերում, որ մայիս ամսով են նշանակած, յիշատակում է իւր սրտի վէրքերը և թախծութիւնը։ «Ես մտադիր էի շատ բան ասել իմ ցաւի, իմ տխրութեան մասին, որ թւում էր, թէ զգում եմ իմ մէջ, և իրօք որ զգում եմ, որպէս զի իմ անձիս համար փոքը ինչ հետաքրքրութիւն շարժեմ իմ մէջ, բայց ինքս չեմ հասկանում, թէ էլ ինչո՞ւ չեմ կարողանում։ Չեմ ուզում թղթի վերայ անցուցանել ցաւերս. ես այնպէս եմ կարծում, որ այդ պատճառով նո-

քա կը կորցնեն իրանց բանաստեղծական հրապոյրը»։ Յետոյ գալիս են խոստումներ, թէ ուզում է ջանասէր, կարգապահ, լաւ և բարի լինել, և յոյս՝ թէ կը հասնի այդ նպատակներին։

Ապա առաջին անգամ ակնարկ է լինում, թէ 14ամեայ պատանին սկսել է մանր քննել գոյութեան գաղտնիքը, զարհուրած երկբայել իւր զօրութեան մեծութեան մասին, և այդ բաները նկարագրելիս նշմարւում է ձգտում բառերով խաղալ։ Իսկ իւր նկարագիրը ծանուցանող կտորը այս է. «Այսուհետև էլ ինչո՞ւ խօսիմ իմ մասին։ Չէ՞ որ ես ինքս դեռ լաւ չգիտեմ, թէ ես ո՞վ եմ և *ի՞նչպէս* եմ. երևի այս ծագում է նորանից, որ ես հասարակ սովորական մարդկերանցից եմ, այն ևս այն պատճառով ես աւելի հասարակ և սովորական մարդ եմ, որ չէի ուզենայ այդպէս լինել։ Էհ, այս ցանկութիւնը բնաւ անսովոր բան չէ»

Յետոյ՝ իմանում ենք, թէ նա պճնում է կերպարանեալ դիւրազգացութեամբ և տխրութեամբ, ուստի սիրում է մենակ զբօսնել, և թէ բնութեան վերայ զգածական հայեցողութիւնը քաղցր է իւր համար։ «Կար ժամանակ, երբ որ ես բռնադատում էի սիրտս, որ տխուր լինեմ, կամ աւելի լաւ է ասել, երբ որ սըր-

տով ուզում էի տխուր երևալ, և ոչ թէ լի-
նել։ Այդ ժամանակը գեղեցիկ չէր. բայց աւե-
լի լաւ էր, աւելի գեղեցիկ էր, քան երկրորդը։ Այս անգամ տխրութիւնն ու վիշտը իմ մէջ ոչ այնքան արտաքին տպաւորութիւն-
ներից էր ծնւում իմ մէջ, որքան իմ ոգու և սրտի շարունակ զարգացումից։ Թէ և տա-
կաւին մի մանուկ էի, ինչպէս որ այժմ ևս նոյն եմ, բայց վիշտս շատ խոր էր, և այն ինձ ցանկալի չէր. ո՛չ, ես ատում էի նորան, և միայն նուազ դէպքերում քաղցր թախծու-
թիւնը թեթևացնում էր իմ տանջանքը։ Այժմ —բայց այժմ ես ինձ դարձրել եմ մի հանե-
լուկ, և իմ ցաւի տեսակը—նոյնպէս մի հա-
նելուկ է։ Ես սիրում եմ վիշտ և կարօտ քա-
շել, դոքա քոյր և մայր են թախծութեան, և շատ անգամ ինքս հետամուտ եմ դոցա, զոր օր. զբօսնելու ժամանակ»։

Այդպէս զբօսնելիս մի գեղեցիկ օր նա կիսաձայն խօսելով ու ցնորելով թափառում էր դաշտի մէջ դէպի վայր, իւր միտքը կորց-
նելով այն լեռների զննութեան մէջ, որոնք որ կազմում են վեստֆալեան կոչուած դուռն. նորա սիրտը սկսում է կարօտով թռթռալ. նորան թւում է, թէ լեռների յետև այն Հեր-
ֆորդն է, ուր տարիներ առաջ այնպէս ու-

րախ և զուարթ օրեր անցուց իւր ազգական-
ների մօտ։ Յանկարծ կարօտակէզ սրտով արտասւում է. «Ո՞ւր է ձգտում սիրտս. դէպի Հերֆորդ։ Ոչ, աւելի, աւելի վսեմ կարօտու-
թիւն ունենալու է ձգտում։ Ոչ, ոչ, դէպի ոչ մի բան, ոչինչը փրփուր է, ինքս էլ չը գիտեմ»։

Այս խօսքերի շարունակ ութիւնը վերջա-
նում է մի քանի բռնազբօսիկ համեմատու-
թիւններով և բառախաղերով, որով յայտնի է դառնում սրամիտ լինելու ճիգ և ջանք։

Նոյն թուականի յաջորդ արձանագրու-
թիւնը սկսւում է յուլիս ամսով, և նա ցոյց է տալիս, թէ մայիսին սկսուած թախծա-
կան անորոշ տրամադրութիւնը այժմ մարմ-
նական տկարութեան պատճառով արդէն հաստատ կերպարանք է առել։ Նա երևակայ-
ում է, թէ ծածուկ աղէթափութիւն և խոլ-
խեցգետի ունի, և վճռել է գնդակով,թոյնով կամ ալիքների մէջ մահ կոչել, եթէ այդ եր-
կու հիւանդութիւնները յայտնուին։ Այս վճի-
ռը յանկարծակի չի կազմուել, այլ նա շատ անգամ խորհել է, մինչև անգամ մարմնական ախտերից առաջ և միայն իւր հոգեկան բոր-
բոքուած վշտերի դրդմամբ։ Նա երկուու-
թեան մէջ էր, արդեօք խսպառ կը ոչնչանայ,

թէ աւելի լաւագոյն գոյութեան մէջ կը փոխուի, եթէ «այս թշուառ աշխարհը» թողնէ. բայց նա դարձեալ նազեր է անում և զարդարւում է վշտով, կարօտով և թախիծով, այդ վիճակը գեղեցիկ համարելով, «թող ոչինչ չը լինի, բացի վշտից, ոչինչ, բացի թախծութիւնից և նորա քոյր կարօտ քաշելուց»: Այս այնքան քաղցր է, որ առաջուայ տարակոյսները, այն «անլեզու յուսահատութիւնը», «կարծը, ցուրտ անապատը», չի կարող նորա կրծքի մէջ իշխել և յաղթանակել. «փառք Աստուծոյ, դեռ ընդունակ եմ զգալ տխրութիւն, քաշել կարօտ, և մինչև որ այդ բանը կարող եմ, թէպէտ կրծքիս մէջ ամայութիւն է, այլ չեմ յուսահատուի և կերթամ խնդութեամբ կը յանձնեմ անձս մահուան»: Նա աշխատում է թոյն ճարել, իսկ երբ որ չի յաջողւում, վրճռում է վառօդ և արճիճ ձեռքբերել:

Յուլիս ամսի վերջերը անյայտանում է ինքնասպանութեան այս մթին տրամադրութիւնը. նա յիշում է առաջուայ երջանիկ օրերը, «երբ որ ինքը» կարողանում էր իւր մէջ բռնի կերպով վիշտ բարձրացնել» և այդ վիճակով ուրախ լինել. յոյս ունի մարմնական տկարութիւնից փրկուիլ, և մեծամեծ հոգսերի մէջ է, որ աւելացնէ իւր ջանասիրութիւնը և յաջողութեամբ աւարտէ գիմնազիական ուսումը: Նշանաւոր է հետևեալ գանգատը. «Բարեկամները չունիմ, այլ հաղորդակցութիւն շատերի հետ. բոլոր դասընկերներս հասակով մեծ են ինձանից, ուստի և ես դեռ ևս համարւում եմ անկատար ծծկեր»:

Այս ժամանակուայ ոտանաւորների նիւթ են կազմում՝ միայնակութիւն, առաւօտեան արև, աշունք, դուռն լեռներ, անտառ, բայց բնաւ թախծութեան գոյն չունին, այլ աւելի զգացական և մտայոյզ խորհրդածութիւններ են բնութեան մասին:

Օրագրութեան 1831, 1832 և 1833 թուականի արձանագրութիւնները, ուրեմն երբ որ նա 16 և 17 տարեկան էր, ցոյց են տալիս նորա սրտի նշաններն աւելի որոշ կերպարանքով, քան առաջ, որ լոկ միայն ակնարկներով էին արտայայտուած կամ ոչ այնքան պայծառ գունաւորուած:

Շատ կտորներում արտայայտւում է գերազանցելու կարօտութիւն, ի մանկութենէ սկսած բարձրութեան և մեծութեան ձգտում, բայց և միևնոյն ժամանակ նոյն նպատակներին հասնելու անկարողութեան զգացում, ինքը իւր ոյժերից խաբուած մնալը և վերջապէս անինքնավստահութիւն:

Մի անգամ մայրը նորան ասել էր, թէ լաւ չէ, որ խափանում է իւր ճախրող հանճարեղութեան թռիչքը, որ կարող է դեռ մեծ ապագայ ունենալ։ Հայրը այս գուշակութիւնների դէմ կասկածներ է յայտնում, իսկ որդին այսպէս է խօսում օրագրութեան մէջ. «Հայրս իրաւունք ունի—բայց կիսով չափ. ես ինքս երբէք չեմ ձգտի այնպիսի տեղ բռնել կեանքի մէջ, որ սովորականից բարձր չլինի։ Այն ոգին, որ մօրից ժառանգել եմ, այն տեսակից է, որ ես բարձր վսեմութեան պիտի ձգտեմ, և ես կարող էի ինձ յոյսերով փաղաքշել, թէ այն ոգոյ ընդունակութիւնները ինձ զօրութիւն կը տան իմ նպատակիս հասնելու, եթէ ոգին այնպիսի մարմնում բնակուած լինէր, որ կարողանար ոգւոյ ձգտումները իրագործել։ Այն ժամանակ ես ցոյց կը տայի, թէ ինչպէս իմ կեանքը հաստատ և հետևողական է, իմ յարատևութիւնը անխախտ, իմ արիութիւնը անընկճելի, և թէ ուրեմն իմ զօրութիւնը բաւական է, որ մարդկանց ամենայն հակառակութեան և ճակատագրի հարուածներին կատարելապէս դիմագրաւէ»։

Գերազանցելու փափագը արտայայտւում է այսպիսի զեղումներով.

«Իմ սիրտը թմրում և միշտ թմրում է։ Կար ժամանակ, որ վիշտս իմ հպարտութիւնն էր. ես երազում էի, թէ նորանով կենդանութիւն ունիմ, թէ ես իմ հոգեկան ոյժերի մէջ եմ և կամ դարձեալ նորանով, և այդպէս իմ շրջապատողների մէջ միշտ ես էի փայլում։ Այժմ ևս չեմ ուզում ուրանալ, թէ ամենայն կողմերից այնքան արժէք կարող էի ունենալ, ինչքան և ուրիշները, եթէ իմ արտաքին պարագաները այլապէս կազմուէին։ Բայց այժմ ոչ միայն նոցանից պակաս եմ, այլ բնաւ ոչինչ եմ։ Իմ սիրտը փափուկ է, ես զուրկ չեմ խսպառ բարոյական և բանաստեղծական զգացումից, և ուրեմն ես կարող էի լինել բախտաւոր, հետևապէս և ուրախ։ — —Առաւօտեան արթնում է միայն մարմինս, իսկ հոգիս այլ ևս չի փոխում իւր վիճակը օր ու գիշերուայ մէջ, ինչպէս մի կիսակոյրի տեսողութեան գործարանը. այսինքն՝ հոգիս գիտէ և զգում է իւր թշուառութիւնը, թէ նա մի հաշմ է և մաշուած է մտածողութեան համար։ Չէ, Աստուած վկայ, լաւ է շիլ լինել, քան կոյր, անարգութիւն կրել, քան ցաւակցութիւն, սրիկայ լինել, քան դարմանի գլուխ»։

«Ես եմ, մարդկանց բազմութեան պէս, տպականուած բնակութիւն։ Ես ճնշման տակ

եմ և չեմ կարող աղաղակել, ինչպէս որ կուզենայի։ Մի ցռկակապ արջ եմ։ Իմ ցռկակապը է հիւանդութիւն, լիմարութիւն, հոգւոյ աղքատութիւն։ Մտքեր գողանալ, կամ քաղել և կցկել, իմ բանս չէ։ Այդպիսի խայտաբղէտ կարկատանքներից կը կազմուի միայն թուրթակի պատմուճան. այս ինձ չի յարմարի։ Իմ տառապանքը խիստ խոր է, իսկ երևակայութիւնս մնում է մակերևոյթի վերայ։ — — Ես թշուառ էակս, հոգով աղքատս, պէտք է գոհ մնամ, որ կարողանում եմ շարադրել գէթ ողորմելի և կցկտուր համեմատութիւններ, որ ամեն մի գձուձ թերթում կարդում եմ աւելի նուրբ, կորովի և ինքնագիւտ ձևով արտայայտուած։ Իւրաքանչիւր քրտնաճիգ էակ, անշունչ մեքենայ, զրաբան, որի բոլոր խելքը լոկ միայն ճարտասանութիւն է, աւելի հմուտ է երևում խօսակցութեան, վիճաբանութեան մէջ, քան ես։ Շատ անգամ ասես թէ ինձ ու ինձ լսելով խոնջեցնում եմ, մինչև որ իմ զգացման համար պատշաճ բառեր եմ գտնում։ Բայց երբէք չեմ կարողանում հասնել գէթ *սովորականին*։ Ես սագի պէս կարկաչում եմ հրապարակաւ իմ անհամ շաղակրատութիւնները, և եթէ աշխարհքի անէծք է բուրթ անհանճարեղութիւնը, այն ժամանակ իմ խըղ-

ճուկ գոյութեան հոգեկան և մարմնական փտած պտուղները՝ կարող էին սնունդ տալ ամեն հետևակախօսութեան և բոլորից էլ անցնել. բայց մի և նոյն ժամանակ փառք եմ ծարաւում Կեսարի ծարաւով։ — Իսկ ե՞ս։ Փոխանակ հասնելու այն բանին, ինչ որ աղերսում էի, կորցնում եմ և այն, ինչ որ ունէի. և եթէ մի բան թղթին եմ յանձնում, այն չունի ոչ համեմանք և ոչ ամոքանք, այլ աղի է ծովի ալիքների պէս, դառն է որպէս լեղի»։

— —«Երբ որ մանկութեան քնից արթնացայ և քիչ քիչ մտաւոր աչքս բաց արի, ես տեսայ ահեղ բաներ մէկ մէկու յետևից, որպէս զի յետոյ նոյն աստիճաններով տեսութիւնս հետզհետէ փակուի։ Ես ունէի պայծառ միտք, մեծ ինքնազգածութիւն, մի կուրծք լիքը յափշտակութիւններով և ծրագիրներով. երբ որ պատանեկութեան շէմքում էի կանգնած, ես կարծում էի, թէ տիեզերքի զարկը իմ երակներիս մէջ եմ զգում. ոչ մի նըպատակ ինձ համար անհասանելի չէր, փառքը իմ եղբայրս պիտի լինէր, վտանգը՝ իմ հարսս։ Բայց աւա՜ղ, երազած բախտաւորութեան գլխապտոյտ բարձրութիւնից, յանկարծ գլորուեցայ և այնպիսի վէրքեր ստացայ, որ էլ չբժշկուեցան։ Երբ որ իմ յոյսերի աւերակ-

ները այսպէս կուտուեցան իմ առաջ, այնու ամենայնիւ տոկալու զօրութիւն գտայ և ապաւինեցայ այն ամենին, ինչ որ մարդու սիրտը վսեմացնում է, մանաւանդ *գիտութեան*. ինձ մխիթարողը պիտի լինէր *ուսումը* և նորա ձեռքից բռնած պիտի առաջնորդուէի բարի կենաց մէջ։ Սակայն, այն ինչ պատրաստւում էի իմ լքուած հոգու մնացած բոլոր եռանդով գրաւել այդ յոյսը, դա էլ ցնդուեցաւ, այդ դատարկ ցնորական պաճուճանքը»։

— — «Ոչ ապրելու քաջութիւն ունիմ, ոչ երևակայութիւն, ոչ մի խելօք բան եմ մտածել, և ոչ գործել, բայց արդէն 17 տարեկան եմ։ Ճակատագիրը խլեց ինձանից այն, ինչով որ մարդ մարդկութեան մէջ որոշւում է, այն է ինքնազգածութիւն»։

— — «Իմ դժբախտութեան արտաքին պատմական կողմը ինքն ըստ ինքեան մոլեգնութիւն կարող է պատճառել։ Մինչև 12 տարեկան հասակս անմեղ անցաւ, բախտաւոր էի, ինչպէս ամենայն մարդ։ Ինձ ասում էին, թէ ես շատ կանուխ պատուական ձիրքերի տէր եմ դարձել և մեծամեծ յոյսեր եմ տալիս։ Ես ինքը ևս փառասիրական ծրագիրներ կազմեցի՝ իմ կենսական վաղահաս հայեացքներով, ես զգում էի, որ հասակից վեր եմ գնացել և

ինձ համարում էի այն սակաւների թւում, որոնք ընտրուած են, թէպէտ ամաչում էի խոստովանել։ Ես մեծացայ, և հէնց որ ճակատագրիս քողը բաց արի, իմ կազմութեանս մէջ տեսայ այնպիսի ծանր մարմնական ախտեր, որ իմ յոյսերից նաև ամենահամեստներին ծաղրել կարող էին։ Բոլոր բժիշկները ինձ համարեցին կատարելապէս առողջ։ Այդ հերիք էր, որ հաւատալի, թէ իմ երկիւղները խկուլթիւն են և ոչ անհիմն։ Այս խօսքերով հեգնում եմ ոչ թէ բժշկական գիտութիւնը, այլ այն հիւանդութիւնը, որ անճանաչելի է և անբուժելի։ Իմ զգացումը վստահելի վկայ էր դորա գոյութիւնը բնաւ չկասկածելու համար։ Բայց այդ զգացումը իմ դժբախտութիւնների մէջ ամենափոքրն էր. աւելի սարսափելի էր այն ազդեցութիւնը, որ նա շատ շուտ գործեց հոգուս վերայ։ Այս անկարող եմ նկարագրել։ Իմ բոլոր ծրագիրները թող տուի, իմ յոյսերը մէկդի նետեցի, ինչպէս մասխարալի խայտաճամուկ ցնցոտիներ, որոնցով որ բախտը ինձ ցանցել էր. բոլոր հոգեկան զօրութիւններս լուծուեցան մի անպատում ցաւի մէջ։ Այնուհետև կամաց կամաց կազմուեցաւ թշուառ ախոնդեան ախտը, սևամաղձը։ Իմ կամքը անտարբերութեան փոխուեցաւ, իմ զօրութիւնը

անզօրութեան, իմ ապրելու համարձակութիւնը մարդատեցութեան։ — Ինձ համարեցին թեթևամիտ, կենսասէր, ցնծութիւն փնտռող, ամենայն ինչ, բայց ոչ դժբախտ։ Երևի թէ իմ վարմունքը, իմ դիմակը տեղիք տուեց այդ կարծիքին։ Եւ հէնց այդ դիմակն էր, ինչ որ մնացել էր ինձ»։

«Մոլորած աչքերս զուր են փնտռում հորիզոնում մի ուրախարար կռուան, մտքերս զուր և անմխիթար թափառում և թափանցում են իմ ապագայ կենաց մէջ, որպէս զի մի յոյս, մի զուարթ ակնկալութիւն նշմարեն։ Առանց *անցեալի*, վասն զի չգիտեմ թէ *ուստի՞* առանց *ապագայի*, վասն զի չգիտեմ թէ *ո՞ւր*, եմ՝ նաև առանց *ներկայի*։ Ուրիշ մարդիկ էլ ինձ պէս աշխարհք են եկել և նոյն վիճակն են վայելում, նոքա հանգիստ են, նոքա ուրախանում են իւրեանց գոյութեան պարգևով, մինչև որ և որովհետև որ հանգիստ են»։ —

«Ինձ, որին որ կրօնի սիւները սառն աւերակ են երևում, որին որ գեղեցկութեան գաղափարը չի բաւականացնում, մնաց միայն ազնուութեան, վսեմութեան, առաքինութեան գաղափար»։ — —

«Կեանքի բեռը մղում է ինձ սաստկապէս, որպէս դաժան և աւերակող փոթորիկ։ Իմ մատաղատունկ յուսոյ ծառը տերևաթափ, սնամէջ և փտած է, իմ հաւատոյ վէմը հերձուած և փլած է. իմ առ Աստուած և տիեզերք սիրոյ ծաղիկը էլ չի կարող մեղմացնել փոթորիկը, նա թոռոմել է. չունի գոյն, բոյր և տերև։ — Այս աղէտալի դրութեան դէմ ապստամբեց սիրտս, խնդրեցի վախճան. բայց փորձեցի մի անգամ էլ սիրտ առնել, հալածել դևերին և նոցա տեղը տալ բանականութեան, որ սա ինձ խրատէ թէ ի՞նչ անեմ, արդեօք հնազանդուի՞մ թէ ոչ, արդեօք ազա՞տ է ձեռքը, թէ կապած է սուրբ պարտականութեամբ։ Բայց ամենից առաջ պէտք է իմանալի, թէ ի՞նչ եմ կորցնում, ինչ վարձք կարող եմ ստանալ հանդերձելում։ Ի՞նչ կապ կայ Աստուծոյ, մարդկութեան և կենաց մէջ։ Ապա թէ ոչ իմ վարանող կարծիքներից կարող է ծնուել շտապովի գործք, զուրկ այն հոյակապ վայելչութիւնից, որ հաստատութեան, պայծառութեան և հետևողականութեան արգասիք է»։ — —

«Ինչ որ ժողովրդեան նախապաշարումը համարում է, թէ աստուածութեան ադամանդեայ բնակութիւն է, այն միայն ծուխ է կապոյտ։ Հապա եթէ և այն, ինչ որ նորանից վերև և ներքև՞ է...» — —

«Առանց սոփեստութեան իմ կարծիքս է, թէ ես ինքնիշխան տէր եմ իմ կենաց և մահու։ Բայց և այնպէս կամենում էի 4 կամ 5 շաբաթ փորձել, արդեօք իմ պարտքս է ապրե՞լ, թէ իմ և ուրիշների առաջ պարտաւորութիւն ունիմ մեռնելու։ Ահա երկու գիշեր ձեռքերս պարզած աղիողորմ աղաչում եմ Տէր Աստծուն, որ առաքէ ինձ հանգստեան հրեշտակ, որ գէթ մի օր կամ մի շաբաթ մրտատանջութիւններից ազատէ ինձ։ Աղօթքս անլսելի մնաց, ուրեմն ճակատագրի զէնքերի դէմ ուրիշ ոչինչ չի օգնում, բայց եթէ կրուելու հրմտութիւնը։ Եթէ այս էր փորձը, ես անշուշտ լաւ չդիմացայ. հիմա անօգուտ է, որ ինձանից համար ու հաշիւ պահանջեմ, մնում է միայն, որ ես ինձ ցաւակցեմ։ Տէր, դու որ անսկիզբ ես, մարդ ուզում է սկիզբ ունենալ, ո՜հ, պէտք է այդպէս ուզենայ։ Երկու օրով գէթ փրկիր ինձ հոգսերից։ Տուր ինձ սկիզբ, որպէս զի ասել կարողանամ, թէ Տէրը հրաշք գործեց ինձ համար, այն ժամանակ ես էլ հրաշք կը գործեմ Տէր Աստծու համար, և աւելի վեր կը հանդիսանամ, քան փառաւորուած հերոսները, որոնք զէնքը հանած խիզախաբար կռուել են, մինչդեռ ես ջլատուած և ձեռքերս կապած մաղլցում եմ։

—Սկզբից յետոյ, Տէր, տուր ինձ շուտ և մի վերջ։—Ամէն։— —

«Երբ որ իմ զգացման սաստկութիւնը առժամանակ թուլանում է, երբեմն ցանկութիւն է գալիս խորհել վիճակիս մասին, բայց անմխիթար է այս գործը, կորցրած աշխատութիւն է, որովհետև անդրադարձութիւնը ամպերով է շաղաղւում, իսկ իմ էութիւնը աւելի ևս շփոթ հանելուկ է։ Առ հասարակ ես լաւ տեսնում եմ, որ վիշտը չի խելօքացնում. դա իմ աչքը ոչ թէ սրեց, այլ միայն թեքեց և դարձրեց, նախ և առաջ կրօնի և նորա դրութիւնների մերկութիւնների վերայ, դա ինձանից խլեց կրօնը, որովհետև կրօնի հաստատութիւնը զգացման մէջ է, իսկ իմ բնութեան յարմարում է միայն զգացուած զգացմունքը»։ — —

«Ես այնպիսի ազդեցութիւն եմ ստանում առաքինութիւնից,ինչպէս ուրիշները մեղքից. ես չեմ կարողանում նորանից բաժանուել։ Իմ արցունքները, հառաչանքները բնաւ չը կարողացան ջնջել այն միտքը, որ ինձ անդադար խրատում է, թէ վերջին մեղքը յապաղեցրու և յետաձգիր։ Մի տաս անգամ երդուել եմ, վաղը վերջ դնել կեանքիս, և տաս անգամ էլ դրժել եմ ուխտը։ Բայց այդ ինձ այն-

քան օգնեց, ինչքան և երդումս, թէ վաղը ուզում եմ բախտաւոր լինել։—Այս օր էլ ջերմ արտասուք թափեցի։ Չկայ մի էակ ոչ երկրնքում և ոչ երկրում, որ նորան միամիտ հաւատով մերձենամ, նորա առաջ սիրտս բանամ։ —Շատ անգամ փորձում եմ աղօթքի մէջ մխիթարութիւն գտնել, բայց ես Աստուծոյ հետ չեմ, Աստուած ինձ հետ չէ։ Մարդիկ ինձ չեն հասկանում, որովհետև ինձ պէս դեռ ոչ ոք չի չարչարուել»։— —

«Կրօնը կորուսի և զարմանալի կերպով բարեպաշտութեան տեղը դրեցի սնոտիապաշտութիւն և նախապաշարում։ Ես եմ միանգամայն հայհոյիչ, անաստուած, միստիկեան (նրբաքնին ի հոգևորս)։ Հաւատոյ գեղեցիկ իսկութիւնը, ճիշտ օրինակը, համարեցի անգոյն, անպաճոյճ. իսկ նախապաշարումը, այն հոյակապ երկի ներկած պատճէնը, կոպիտ նմանութիւնը, իմ երևակայութեան մէջ յաղթանակ է ստանում»։— —

«Միայնակութեան ժամանակ, երբ որ սիրտս ամայի և շփոթութիւն է, ինձ այնպէս է թուում, թէ միայն իմ մարմինը չէ սուաղած գերեզման, այլ ամբողջ ահագին արարչութիւնը նոյնպէս մի ահագին ստութիւն է, որ հազարաւոր և բիւրաւոր մարդկանց սրտեր խա-

բել է մի սիրոյ, իմաստութեան և յաւիտենական էակի ամենակարողութեան շլացուցիչ առասպելով։ Այսպէս կորուսի հաւատ առ Աստուած, որովհետև ինքս ինձ այլ ևս չէի հաւատում։ Թող շատ նուրբ լինի այդպիսի սրտութիւնը և անթափանցելի նորա հիւսուածքը. թող կրօնի սկզբունքները դիւրազգաց մատաղ սրտի մէջ հրեղէն գրով դրոշմուի խղճի և հաւատի մետաղի վերայ. բայց եթէ մի դժբախտութիւն սկսէ իւր դժոխային փոթորկութիւնը, այն ժամանակ հրեղէն գիրը կը սրբուի, ինչպէս դարմանը հողմից, և կը մնայ դատարկութիւն և բաւական տեղ յուսահատութեան դևերի համար։»— —

«Հերիք է, հատորներ կարող էի լցնել ողբերով և գանգատներով, և վախճանին չէի հասնի։ Տէր, դու տեսնում ես իմ սիրտը, գիտես իմ արցունքները, լսել ես իմ հառաչանքները։ Ձգտեցի ուղիղ մտքով, բայց ձեռնունայն դարձայ։»— —

«Ծնողներին գրած նամակս իմ սիրտը հալեց և ստրջացայ. ստիպուեցայ մոռանալ մինչև անգամ իմ անաստուածութիւնը, ազատամտութեան մոլութիւնը, և կէսբերան միայն ծաղրեցի կրօնը. նամակը ինձ ուղղեց, բարեպաշտութիւնս աճեց... ո՛ւշ է»։— —

«Կը ցանկայի, որ ինքս լինէի իմ ստեղծող, այն ժամանակ ես կարող էի հեղինակին անիծել, իսկ այժմ, թէպէտ մի աղօտ գաղափար ունիմ Աստուծոյ մասին, չեմ համարձակւում հայհոյել նորան։ Բայց նա ինձ թողեց, ես էլ թողնում եմ նորան և աշխարհքը։ Իմ հնազանդութիւնը այնքան է, ինչքան և նորա պարգեւած շնորհքը»։— —

«Բայց հաւատացէք (ծնողներ), իմ սիրտը սերտ կապուած էր ձեզ հետ, ես ընդունակ էի *մեռնել* ձեզ համար, բայց *չէի կարող* ապրել ձեզ համար։ Հաւատացէք, ձեզ այնպէս եմ սիրել, ինչպէս որ մի ծնող կարող է յուսալ իւր որդուց։ Երկրի վերայ ձեզանից աւելի թանկ բան չունէի, աւելի թանկ էիք, քան այս աշխարհը, աւելի թանկ, քան դերաշխարհիքը։ Երբոր ես ինքնասպանութեան մասին խորհում էի, արդէն վաղուց տեսել էի և փակել էի կրօնի հետ իմ հաշիւները, բայց հէնց որ ձեզ յիշում էի, յուսահատութեամբ տատանւում էի»։— —«Ես ուզում եմ խնայել ձեզ մի մեծ չարիքով հազար *մեծազոյներից*։ Կամ կարծում էք, թէ աւելի ծանր հարուած չի կարող լինել։ Չէ՞ որ ես ունիմ իմ *պատիւը*, ունիմ խիղճ, ոչի վերայ մեծ բիծ է կպած։—Կամ հանդերձեալ կեանք չկայ,

անմահութիւն չկայ, այն ժամանակ անխորհուրդ է խօսքեր սպառել, որովհետև այդ դէպքում ոչ առաքինութիւն կը լինի և ոչ մեղք, և իմ գործը մի անտարբեր բան պիտի համարուի։ Կամ կայ շարունակութիւն, այն ևս *յաւիտենական*. իսկ այս դէպքում մեր աստի կեանքը ստորակարգեալ, երկրորդական շահ ունի, և ուրեմն ես աւելի լաւ եմ ընտրել, որ զրկւում եմ մարմնական կեանքից, և ոչ—ինքս իմ համարումից, մարդկային արժէքի մնացորդից»։— —

«Վաղուց հաճութիւն չեմ ունեցել այս տեղ բան արձանագրել. այդ ժամանակ իմ վէրքերը բացւում են և ես ամենադժբախտն եմ. թէ ինչ վախճան կունենամ, այս գիտէ Աստուած։ Ես լիովին կշտացել եմ իմ ողորմելի գոյութիւնից, և անշուշտ հեշտ կազատուէի դորանից, եթէ չկնաճէի իմ հարազատ մերձաւորներից»։— —

«Սև քողը աւելի և աւելի խաւար է սրփռում իմ օրերի, իմ սրտի վերայ։ Այսօր յանպատրաստից երկու երգ յօրինեցի իմ պղտոր տրամադրութիւնից դրդուած։— Ես մեռած եմ, ոչ սիրտ ոչ զօրութիւն ունիմ, միայն իմ վիշտը ապրում է։ Իմ բախտաւորութեան

աւերակների վերայ նստած ապուշի պէս նայում եմ աշխարհին, բայց նորա մէջ ոչինչ չեմ տեսնում, ոչ էլ մի բան եմ հասկանում»։— —

«Մէնակ լինիմ, թէ ընկերութեան ուրախ շրջանում, շատ անգամ խելացնորութիւն է գալիս վերաս, իսկ այն ժամանակ կարծես, թէ մի սովատանջ ճիճու փորում է իմ սրտի մէջ այնքան խոր, մինչև որ յոգնի, իսկ ես թմրեմ. այնուհետև մի հառաչանք զարթեցնում է կամ նորան կամ իմ զգայարանքները։ Դարձեալ մի տարի ևս, և ես անտարակոյս յիմարանոցում կը լինիմ»։— —

Նորա օրագրութեան զանազան կտորներից և նամակներից յայտնւում է, թէ 4 տարի տանջուել է ինքնասպանութեան մտքերով, որ և շատ անգամ փորձել է, բայց խափանուել է կամ արտաքին պատահական հանգամանքներից, կամ ներքին պատճառներից։

4.

Թէ ինչպէս Կարլ Ֆ. Հոֆֆենհաուզէնի մէջ անձասպանութեան վճիռ հասունացաւ, մութն է մնում նորա կեանքի արտաքին հանգամանքներից, և միայն նորա օրագրութիւնը, նամակները և ոտանաւորները լու-

ծում են այդ խնդիրը, որ մի խրատ և զգուշութիւն է ամենայն դաստիարակչի համար։

Մահուանից յետոյ բժշկական մարմնահերձութիւնը այս հետևութիւնը հանեց։ Ուղեղի սարդոստենու մաշկը (arachnoidea) իրանց կից երկու պարուտակների հետ միացել էր, մահակի կողմը հաստացել, պղտոր և սպիտակ էր։ Ուղեղը խիստ մեծ էր, գալարումները բազմաթիւ, գեղեցիկ դասաւորուած, չափաւոր խորութեամբ, նորա բովանդակութիւնը կանոնաւոր, մոխրագոյն նիւթը խիստ զարգացած։ Ուղեղի խարսխում գտնուեցաւ կէս ունցի ջուր։ Բացի գնդակի պատճառով վնասուածներից՝ կրծքի խոռոչում բոլոր մասերի կազմութիւնը կանոնաւոր էր։ Նոյնպէս ևս որովայնի խորշում բոլոր փորոտիքը ըստ ամենայնի առողջ էր, բացի *գալարաղիքից*, որ չափազանց նեղ էր և խիստ հաստ երեսներով։

Դրեզդէնի մի անուանի բժիշկ, որին ծնողները բժշկական արձանագրութիւնը ուղարկելով, նորանից խնդրել էին իւր կարծիքը, այսպէս եզրակացրեց, թէ պարուտակների հաստանալը և միանալը, նոյնպէս և ուղեղի ծոցերի մէջ կուտակուած ջուրը, նշան են առողջութեան մի խանգարման, որ սկիզբ առնելով գալարաղիքի մէջ, իսկ այնուհետև

անդարմանութիւնից ազդեցութիւնը հասցրել է ուղեղի վերայ. և փորձով ևս յայտնի է, որ գալարաղիքի սեղմուելը վնասում է ուղեղին։ Ուղեղի վերայ ազդումը անցնելուց յետոյ, հոգին էլ խաւարել է, և որովհետև աղեցաւի շարունակութեան և սաստկութեան հետ արեան շրջանն էլ միշտ խափանուել է, հիւթերի յորդութիւնը դէպի ուղեղը շատացել է, որով վերջինը ճնշուել և վնասուել է, նորա պարուտակները հիւանդացել են, և ներսը ջուր է թափուել, Այս ժամանակից սկսած հանգուցեալը ազատ չի եղել, այսինքն անհամարելի և անմեղադրելի այն բոլորի համար, ինչ որ գործեց։

Թէ որքան հիմնաւոր է այս խորհրդածութիւնը, թող բժիշկները վճռեն։ Բայց հոգեբանը կը դժուարանայ բաւականանալ նախ այն պատճառով, որ Կարլ Ֆ. Հոհէնհաուզէնի մէջ ոչ ոք չի նկատել հոգեկան զօրութեանց խանգարումն կամ խաւարումն։ Եթէ մինչև անգամ ընդունէինք, թէ գալարաղիքը հիւանդական ազդեցութիւն է գործել ուղեղի վերայ, հետևապէս նաև հոգեկան տրամադրութեան վերայ, հիմա օրագրութիւնից յայտնուում են ուրիշ պատճառներ ևս—հոգեբանական պատճառներ, որոնք ազդու ներգործել են հոգ-

ւոյ այն ուղղութեան վերայ, որով ինքնասպանութեան միտք յղացաւ և ապա ի կատար ածուեցաւ։ Ծնողներն էլ դժուարանում են իւրեանց որդու ողբալի վիճակը միայն մարմնական պատճառին վերագրել։

Մայրը որդու արտաքին կեանքից հեռևեալ տեղեկութիւններն է հաղորդում, թէ դա 1830 թ. աշնան սկզբին առաջին անգամ գանգատուեց խոստուկի և սաստիկ փորկապի մասին. այն ինչ օրագրութիւնը արդէն ամիսներով առաջ՝ մայիսին՝ խօսում է վշտի և մի անորոշ տխրութեան մասին, և յետոյ յուլիսին թէպէտ արձանագրողը երևակայում է, թէ աղեթափութիւն և խոլխեցգետի ունի, և վճռապէս հաւատացնում է, թէ ինքն իրան կսպանէ, եթէ երևակայածը իրականանայ, բայց և աւելացնում է, թէ այս մտադրութիւնը յանկարծական վճիռ չէ, այլ ինքը ընդհակառակ «առաջ շատ անգամ պատրաստ է եղել՝ անկախ այդ հիւանդութիւնից իւր թշուառ գոյութեանը վերջ դնել։ Ուրեմն ինքնասպանութեան գաղափարը արդէն 14 կամ գուցէ և 13 տարեկան հասակումն է զարթել նորա մէջ, անշուշտ առաջ, քան մարմնական հիւանդութիւն է զգացել, և յամենայն դէպս, շատ աւելի առաջ, քան գա-

լարաղիքը պիտի կարողանար ազդեցութիւն գործել ուղեղի վերայ։

Բայց աւելի որոշակի վճռաբար են խօսում ուրիշ հիմունքներ, թէ նորա սեամաղձութեան և ինքնասպանութեան մտածմանց առաջին և գլխաւոր պատճառը՝ պէտք է փընտռել ոչ թէ մարմնական տկարութեան, այլ նորա հոգեկան զարգացման մէջ, այսինքն այն ուղղութեան մէջ, որ նորա հոգին ստացաւ վաղ մանկութիւնից. ապա ուրեմն մարմնական տկարութիւնը պէտք է նկատուի որպէս աւելի սաստկացնող գործակից պատճառ, և ոչ սկզբնապատճառ։

Մանուկ Կարլ Ֆ. Հոֆէնհաուզէնը Բերլինում թատրոնի և ընթերցանութեան մէջ նորդութեամբ մտաւ երևակայութեան աշխարքում և գնալով աւելի ընտելացաւ այդ գայթակղեցուցիչ աշխարհին։ Թէպէտ թատրոն յաճախելը զանազան կերպով է ազդում մանուկների վերայ՝ նոցա խառնուածքի և բնութեան համեմատ, բայց շատ քիչ բացառութեամբ գրեթէ միշտ վնասակար է դառնում։ Դժբախտ որդու մայրը, սարսափելի փորձից ուշ խրատուելով, կատարեալ ճշմարտութիւն է յայտնում, թէ թատրոնը մանկանց համար մի քաղցր, արբեցուցիչ թոյն

է։ «Նոցա երևակայութիւնը», շարունակում է նա ճիշտ ստուգաբանութեամբ, «հեշտ է գրգռւում չափազանցութիւններից. իսկական կենաց փոքրիկ վայելչութիւնները նոցա թըւում է նսեմ, ամայի և տխուր՝ թատրոնական շլացնող աշխարհի համեմատութեամբ։ Բանաստեղծական հրապուրիչ հանդերձանքի տակ, բեմի վերայ երևում են ամենամեծ ոճրագործեր և մանկական պարզամիտ երկինքը թունաւորում են, իսկական կեանքը այնպիսի հայելիի մէջ ցոյց տալով, որով նոցա հասկացածը խակ և պղտոր հայեացքներ, սուտ յոյսեր և ծուռ սկզբունքներ է դառնում»։

Մի այդպիսի թոյն է մանուկների և պատանիների համար վիպասանութիւնների ընթերցանութիւնը, նոյն իսկ բարձր բանաստեղծական երկերի ընթերցանութիւնը, եթէ նոքա չեն համապատասխանում մատաղ սերընդեան հասակին և զարգացման, և առանց ընտրութեան անխտիր ամենայն բան նոցա առաջարկւում է։ Այս թոյնն էլ առատութեամբ ըմպեց Կարլ Ֆ. Հոֆէնհաուզէնը մանկութեան հասակում։ Մինչև անգամ նախ քան կարդալ գիտենալը, բանասէրների ընկերութեանց մէջ, նա լսում էր ի լուր ամենեցուն կարդացած նորագոյն բանաստեղծու-

թիւնները, առանց խորութիւն դնելու, թէ որքան պատշաճաւոր է բովանդակութիւնը. իսկ հենց որ այբուբենը սովորեց, նա սկսեց ինքն իրան կարդալ Հայնէի ողբերգութիւններ. ը և դոցա նմանները։ Երևում է, որ այս տեսակ ընթերցանութիւնը միշտ եռանդով շարունակուել է նոյն հասակում, որովհետև 14 տարեկան ժամանակ նորան յայտնի են եղել թէ նշանաւոր և թէ նորելուկ հեղինակութիւնները։

Դժուար չէ երևակայել, թէ այսպիսի ընթերցանութեան մէջ մերկացող փոփոխուկ երևակայական աշխարհը՝ ինչ ազդեցութիւն պիտի գործէր Կարլ Ֆ. Հոֆենհաուզէնի փափուկ մտքի վերայ։ Այրական հասակի աւելի զօրաւոր ոգին անգամ շատ ջանք պիտի անէ, որ այդ կերպի ազդեցութիւնից չճնշուի, իսկ մի մանուկի ոգին ինչպէս պիտի կարողանայ նորա ծանրութեան տակ դիմանալ։ Նա միթէ կարո՞ղ էր ըմբռնել *Շէքսպիրի* մտածողութեան համարձակութիւնը և հոգեբանական խորութիւնը, կամ *Ֆաուստի* մէջ ամենավսեմ բանաստեղծական հանճարով արտայայտած՝ փիլիսոփայական խորհուրդների նրբնաքննութիւնը, որ հասակաւորների համար էլ դժուարալոյծ խնդիր է։ Ի՞նչպէս պիտի մերձենար

այդ քնքոյշ արարածը *Ժան Պաուլի* հանճարամիտ զուարճախօսութեան, կամ *Վերթերի* զգացողեղ քնարերգութեան, կամ *Տիկի* հրաշախառն վիպականութեան, կամ *Շիլլերի Աւազակների* մէջ երևակայութեան կատաղի կրակին, առանց թևերը այրելու։ Ի՞նչպէս պիտի կարողանար նորաբողբոջ ծարաւող փոքրիկ հանճարը՝ առողջ սնունդ և ուղղութիւն ստանալ զարհուրելի, հրեշաւոր և գարշելի բաները խիստ զգացմամբ նկարագրող բանաստեղծ *Վիկտոր Հիւգոյից*, կամ ամենայն սրբութիւն ուրացող, կենսայագուրդ և մարդատեաց *Բայրոնից*, կամ ինքնասէր, ամենայն հաստատութիւն ծաղրող, ամենայն բարք անարգող, ամենայն վեհութիւն ցեխի մէջ պղծող *Հայնէից*։

Ահա սոքա էին այն բանաստեղծական ծաղիկները, որոնցից Կարլը՝ մանկութեան ժամանակ ծծել է քաղցրութիւն, որ հարկաւ նորա համար թոյն պիտի դառնար։

Մի ուրիշ, աւելի նուազ դիւրագրգիռ մանուկ՝ գուց է այդպիսի ընթերցանութիւնից քաղէր միմիայն զուարճութիւն. և ուրիշ վնաս չստանար, բացի ժամաւաճառութիւնից և մասամբ տհաճութիւնից լուրջ զբաղմունքների դէմ։ Ուրիշ մանուկը, եթէ նոյնպէս

դիւրահաս երևակայութիւն ունենար, բայց այնպէս նուրբ գրգռուող չլինէր, մի և նոյն սննդով կարող էր դառնալ այն սառնասիրտ և անձնասէր աշխահամարդերից մէկը, որոնք չեն խղճում ամենայն վսեմ գաղափար և զգացում ծաղրել, որպէս նախապաշարում, իսկ քաղցրութիւններ ճաշակելու մէջ՝ միշտ փընտռում են ամենաքաղցրագոյնը։—Իսկ Կարլը ուրիշ կարգի ոգի ունէր։ Թէպէտ նա չունէր իսկական հանճար, որ արգելքների դէմ զօրեղ եռանդ է հանդիսացնում և ձախորդ ազդեցութեան ներքոյ չի ընկճւում, բայց և այնպէս գերազանց ձիրքերով օժտուած էր. ունէր աշխոյժ երևակայութիւն, խոր զգացում, միանգամայն բարոյական ընութիւն և զօրեղ կամք։ Ապա ուրեմն անպատշաճ և անկանոն ընթերցանութիւնը անհամեմատ աւելի կորստաբեր ազդեցութիւն պիտի գործէր նորա վերայ։ Նորա օրագրութիւնը պարզ ապացոյց է, թէ ինչպէս այդ միջոցով նախ բորբոքուեցաւ նորա երևակայութիւնը և հիւանդաբար գրգռուեցաւ զգացումը, յետոյ նորա բոլոր էութիւնը հետզհետէ բռնուեցաւ պաճուճեալ խանդաղատութեամբ, որ մոլեգներով՝ սկզբում բռնադատուած թախծութիւն դարձաւ, ապա և իսկական հոգեկան վիշտ։ Միայնակ զբօ-

սանքները և վաղահաս բանաստեղծական փորձերը այդպիսի դիւրագրգռութեան տուեցին աւելի և աւելի սնունդ։ Ինչպէս ամենայն սեամաղձ, Կարլը հեշտութիւն և զուարճութիւն էր զգում իւր երևակայական կամ իսկական վշտով զբաղուելը, անդադար նորա մասին խօսելը, այն ևս միայն իւր անձի հետ, նորանով խաղալը և նորա հետ նազեր անելը։

Բայց այս առաջին շրջանն էր նորա հիանդութեան, որ ընթերցանութեան թոյնով նորա հոգու մէջ տարածուեցաւ։ Երկրորդ շրջանում թոյնը սկսեց քայքայել աւելի ազնիւագոյն մասերը։

Բայրընի, Հայնէի և սոցա նման բանաստեղծների ընթերցանութիւնը՝ այնպիսի ազդեցութիւն է գործում միամիտ մատաղ հոգու վերայ, որ թառամեցնում է առ Աստուած, կրօն և առաքինութիւն հաւատքը, ծնում է անտարբերութիւն հոգևոր և բարոյական գաղափարների համար և վերջապէս սնունդ է տալիս սառն ազատախոհութեան և կոպիտ անձնասիրութեան։ Բայց ի հարկէ Կարլի բընատուր բարոյական ընութիւնը, իւր զօրեղ կամքի հետ միասին, կարողացաւ դէմ դնել այդպիսի ազդեցութեան։ Անհնարին էր նորա սրտից հանել հաւատարիմ և մտերիմ ծնողա-

սիրութիւնը, Աստուծոյ երկիւղի վերայ հաստատուած առաքինութեան և արժանապատուութեան խոր զգացումը, բայց դոքա պէտք է խախտուէին և հակառակութեան մէջ մըտնէին այն գաղափարների և հայեցուածքների հետ, որ նա այնպէս վաղ սկսեց ստանալ ընթերցանութիւնից։ Այսպէս սկսուեցաւ մի ներքին երկպառակութիւն, մի կռիւ լաւագոյն զգացման և նորա թշնամի անհաւատութեան մէջ. նա սկսեց գերբնականութեան մասին մանրախուզութիւններ կարկատել, և ընկըղմուեցաւ այնպիսի երկուութեան ծովի մէջ, ուր պէտք է իւր անզարգացած իմացականութիւնից, փորձառութեան պակասութիւնից և կեանքի անծանօթութիւնից կորստեան մատնուէր։

Իւր օրագրութիւնը հաստատ ապացոյց է, թէ Կարլը աստուածուրաց չէր։ Եթէ երբեմն նա փորձում էր կրօնի ճշմարտութիւնները նսեմացնել, անշուշտ նորա սրտի իսկական վկայութիւնը այդ չէր։ Նոյն իսկ նորա մահը մի նոր ապացոյց է այս բանի. անհաւատը այդպիսի ողբալի վախճան չի ընտրում իւր կեանքի համար, այլ քաջապէս արշաւում է կեանքի մէջ, և իբրև սառն անձնասէր, հեշտութիւն փնտռող աշխարհամարդ

է դառնում։ Այն հանգամանքը, որ Կարլի ոգու ազնուագոյն սաղմը հաւատարիմ մնաց Աստուծոյ և անմահութեան հաւատքին, պատճառ եղաւ, որ նա սկսեց երկմտութիւններով տանջուիլ և վերջապէս արդարև վաստակեց մի խոր հոգեկան վիշտ։ Նա ոգորում էր իւր սև հոգու հետ, նա լոյս էր փնտռում իւր կասկածների խաւարի մէջ, նա ձգտում էր գերբնականութեան գաղտնիքը իմանալ. սակայն իւր տկար բանականութիւնը անկարող գտնուեցաւ փրկել նորան՝ հակառակ գաղափարների և զգացմանց լաբիւրինթոսից, ուր նա ընկել էր։ Նորա ջանքերի ապարդիւն վախճանը աւելի ևս սաստկացրին տառապանքը, որ կրծում էր նորա հոգին։ Այդ ժամանակ ինքնասպանութիւնը նորան երևեցաւ միակ ելք այն անօգուտ պատերազմը վերջացնելու համար։ Քանի կենդանի էր, ճգնում էր կրօնական ճշմարտութիւնները պինդ պահել իւր հոգու խորքի մէջ և այնպէս ապրել, բայց չկարողացաւ։ Եթէ նա խպառ ուրացած լինէր այն ճշմարտութիւններից, նա ինքն իրան չէր սպանի, տակաւին կեանքից արբեցուցիչ քաղցրութիւնները չճաշակած. այլ իւր երիտասարդական ուժով կընկղմէր կեանքի մէջ, և մէկդի ձգելով ամենայն կրօնա-

կան և բարոյական պատուէրները և միայն՝ գուցէ խոհեմութեան հաշիւներից բռնելով՝ կենսասէրի վայելքներ կը փնտռէր։

Բացի երևակայութեան բորբոքումից, զգացման խանգարումից և կրօնական վարանումներից՝ Կարլ Ֆ. Հոհէնհաուզէնին քիչ վնաս չտուեց և փառասիրութիւնը։ Արդէն մանկութեան ժամանակ նորան վարժեցրին սնափառութեան։ Յայտնի է, որ ծնողները, և մանաւանդ մայրերը անխորհուրդ անձնասիրութեամբ պարծենում ենիրանց զաւակների գեղեցկութիւններով, մինչև անգամ նոցա երեսին գովեստներ են շռայլում և մի առանձին հաճոյքով նոյն գովեստները նոցա բերանումն են դնում. այս բանից զերծ չմնաց Կարլը հէնց լոյս աշխարհը տեսնելուց յետոյ։ Սիրուն մանուկը ամենայն տեղ աչքի էր ընկնում, նորա ականջին հասնում էր, որ ծնողների բարեկամները և նոյն իսկ ծնողները երկինք են բարձրացնում նորա գեղեցկութիւնը, որով նորա սրտի մէջ ցանուեցաւ սնափառութիւն։ Ապա այսպէս հրռչակուեցաւ մանուկի ոչ միայն մարմնական գեղեցկութիւնը, այլ և նորա խելքն ու միտքը։

Սակաւ են այնպիսի մանուկներ, որոնց մէջ որ շրջապատողները երևելի յատկութիւն-

ներ չտեսնեն և նոցա չգուշակեն փառաւոր ապագայ։ Մանկական ոգին, որ մեծ աշխուժութեամբ ամենայն ինչ ըմբռնում և իւրացնում է, սխալմամբ շատ անգամ համարւում է տաղանդի կամ նաև հանճարի հաւաստի նշան։ Կարլին էլ վիճակուեցաւ այս բախտը, մանաւանդ որ իրօք պարգևած էր հոգեկան և մարմնական լաւ կարողութիւններով։ Բայց նորա ձիրքը ծնողներին, և մանաւանդ մօրը, ինչպէս և բարեկամներին, անհամեմատ աւելի մեծ երևեցաւ, քան ինչ որ իսկութեամբ էր, ուստի և մանուկը անդադար լսում էր, թէ նա չտեսնուած տաղանդ է և թէ երևելի մարդ կդառնայ։

Օրագրութիւնից ստուգապէս երևում է. որ նորա փառասիրութիւնը վաղ սկսուեցաւ, որ նա միշտ ոգևորւում էր գերազանցելու ձգտումով և յափշտակւում էր մեծութեան և բարձրութեան փափագով։ Աւելի մօր միամտութիւնից և յուսադրական քաջալերութիւններից սնուած ձգտումը դէպի բարձր նպատակները՝ դրդեց նորան, որ պատրաստուի գերազանց հանդիսանալու հոգեկան գործունէութեան շրջանում, իւր բնական ասպարիզում, ուստի և իւր մարմնական ոյժերից վեր ջանասիրութեամբ աշխատել սկսեց

և վնասեց իւր առողջութեան։ Գերազանցութեան ձգտումը միայն ուսումնարանական գործերում չյայտնուեցաւ, որ առաջին լինի ընկերակիցների մէջ, այլ փառասիրութեան նպատակների շրջանը աւելի լայն ծաւալ ստացաւ, հետևապէս վնասն էլ ըստ այնմ ընդարձակուեցաւ։

Մանուկ հասակում ընթերցանութիւնը այնպէս զարգացրեց նորան, որ նա իւր հասակակիցներից անհամեմատ աւելի առաջ էր։ Բայց այպէս կանխեցրած կրթութիւնը ոչ թէ դրական ծանօթութիւններ աւելացրեց, որ աւելի պատշաճ է մանկական և պատանեկական հասակին, այլ որովհետև նա աւելի բանաստեղծութիւններ էր կարդում՝ նորա մէջ չափազանցութեամբ զարգացաւ երևակայութիւնը և զգացումը, կեանքի ընդհանուր հայեացքը և մտքեր արտայայտելու կամ ճարտասանական հմտութիւնը։ Հէնց այս առաւելութիւններից աւելի մոլորուելով, այնպիսի ուղղութեամբ սկսեց պարապել, որով ձգտում էր շուտով հաւասարուել բանաստեղծութեան աշխարհի մեծ աստղերին։ Իւր զգացումները ոտանաւորով արտայայտելու փորձերը, սրամիտ լինելու և բառախաղով խօսելու ջանքերը, 16 տարեկան հասակում դեռ ևս ոչ մի

նշանաւոր գործ կատարուած չունենալու գանգատը, իւր ուսումնարանական անխոնջ աշխատութիւններից սակաւ գոհունակութիւնը, չիրագործուած յոյսերի պատճառով տրխրութիւնը և այլն,— այս բոլորը, որ օրագրութեան մէջ շատ անգամ է նկարագրւում, անհերքելի ապացոյց է, թէ նա իրան հանճար կարծելով, վաղօրօք, մանուկ հասակում, ձգտում էր այնպիսի գերազանցութեան, որ աւելի յատուկ է հասունացած մարդուն։

Բայց Կարլ Ֆ. Հոֆենաուզէնը շուտ զգաց, թէ իւր կարծեցած հանճարը չունի, թէ իւր ձիրքերը որքան էլ որ նշանաւոր լինին, դարձեալ չեն բաւում, որ վաղ ընդունակ կացուցանեն արտաքոյ կարգի մեծագործութեանց համար։ Քանի աւելի խոշոր յոյսեր էր երազում իւր մասին, այնքան աւելի պէտք է լքուէր, աւելի վհատուէր, բացէիբաց տեսնելով որ իւր զօրութիւնները պակասաւոր են իւր ցնորած բարձր նպատակների հասնելու համար։ Հետևապէս զարմանալի չէ, որ վերջապէս հրաժարուեցաւ մեծութեան ձգտումներից և սթափուելով իմացաւ, թէ բնաւ չի կարողանայ սովորականից վեր գնալ։ Եթէ նա իւր հրաժարումը միայն մարմնական առողջութեան խանգարման է վերագրում, եթէ հաւատացնում է, թէ միայն այդ պատճառն է արգելում, որ մեծութեան հասնի, անշուշտ այդ աւելի անձնախաբութիւն է, քան ճշմարտութիւն։ Մարդկային ինքնասիրութեամբ՝ կամ

չկարողացաւ ճանաչել իսկական պատճառը, կամ չէր ուզում ինքն իրան խոստովանել։

Միայն աւելի հեշտ է հասկանալ, թէ երբ որ Կարլը համոզուեցաւ, որ ոյժ չունի երևակայած գերազանցութեան հասնելու, և այդպէս կորցրեց վստահ ինքնազգածութիւնը, ապա ուրեմն, արդէն կանխաւ, ուրիշ ներգործութիւններով, բոյն դրած թախծութիւնն ու կեանքից դժգոհութիւնը՝ նորա մէջ այնուհետև աւելի սնունդ պիտի ստանային և սաստկանային։

Շատ զանազան պատճառներով փորձել են մեկնել Կարլ Ֆ. Հոհենհաուզենի բարոյական պարտութիւնը, բայց անաչառ դատողութիւնը հոգեբնական ստուգութեամբ հաստատում է, թէ նա առաւելապէս անպատշաճ ընթերցանութիւնից իւր անկման հասաւ։ Այդ պատճառով նորա հոգեկան զարգացումը մոլորուեցաւ, նորա զգացումը հիւանդական ձև ստացաւ, նորա կրօնական հաւատը տարակոյսների զոհ դարձաւ, նորա կրծքի մէջ աւելի մեծ հասակի սնափառութիւն շարժ ուեցաւ, որ համապատասխան չէր ունեցած հոգեկան զօրութեան։ Իսկ թէ նորա ողբալի վախճանը պատրաստող խաւար տրամադրութեան մէջ՝ որքան բաժին ունէր մարմնական հիւանդութիւնը, անհնարին է ճշտիւ որոշել, բայց անշուշտ դա էլ երկրորդաբար պակասը լրացրեց։

ՀՍՍՌ-ԱՄՆ-ՍՍՀ
ZUUR-AIM-CCP

2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0051096

68